

*ՀՀ Արմավիրի մարզի Արգավանդ համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնն զբաղեցնելու համար*

1. ՀՀ Արմավիրի մարզի Արգավանդ համայնքի ղեկավարի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ (ծածկագիր 3.2-1):

- Առաջին կարգի մասնագետը աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է հողի հարկի գանձումը:

- Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով այլ լիազորություններ: Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է

- միջնակարգ կրթություն

- սույն պաշտոնի անձնագրի 10-րդ կետի 'բ' ենթակետում նշված իր լիազորությունների հետ կապված իրավական ակտերի իմացություն:

Նշված թափուր պաշտոնն զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2011թ. Նոյեմբերի 4-ին, ժամը 12.00-ին Արգավանդի գյուղապետարանի շենքում:

- Դիմող ՀՀ քաղաքացիները աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը.,

- Դիմում մրցութային հանձնաժողովի անունով (ձևը լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս):

- Տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները՝ բնօրինակների հետ միասին .

Հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում ՀՀ կառավարության 3-ի N 310-Ն որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով: Հայտարարություն այն մասին, որ ինքը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

- արական սեռի անձինք՝ զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասային կցագրման վկայականի պատճենները,

- մեկ լուսանկար 3X4 ամ. չափի

- անձնագրի պատճենը

մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրի և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են դիմել ՀՀ Արմավիրի մարզի Արգավանդի գյուղապետարան և ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ վարչություն, հասցեն Աբովյանի 71.

Հեռ.՝ 0237 2-07-70 0237 2-76-49: Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10.00 –ից 16.00–ն, բացի շաբաթ և կիրակի օրերից: Դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2011թ. հոկտեմբերի 17 –ը: